

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒԼԻՍ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:


1

Ո՞ր մեծությունն են անվանում ճանապարհ:

- 1) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 2) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:
- 3) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:
- 4) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:

2

Նկարում պատկերված են երկու մարմինների անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկները: 2-րդ մարմնի արագությունը քանի անգամ է մեծ 1-ին մարմնի արագությունից:



- 1) 3
- 2) 2
- 3) 1
- 4) 4


3

Մարմնի արագության պրոյեկցիան ներկայացված է $v_x = 2 + t$ հավասարմամբ, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ի՞նչ բանաձևով է որոշվում տեղափոխության պրոյեկցիան այդ շարժման դեպքում:

- 1) $S_x = t^2/2$
- 2) $S_x = 2 + t^2/2$
- 3) $S_x = 2t + t^2/2$
- 4) $S_x = 2 + t^2$

4


Որքա՞ն է նկարում պատկերված անշարժ թեք հարթությամբ սահող m զանգվածով մարմնի արագացումը շփման բացակայության դեպքում:



- 1) $g \sin \alpha$
- 2) $g \cos \alpha$
- 3) $g \operatorname{tg} \alpha$
- 4) g

5

m , $2m$ և $3m$ զանգվածներով $ա$, $բ$ և $գ$ գնդերը դասավորված են մի ուղղի երկայնքով՝ ըստ նկարում պատկերված հեռավորությունների:



Գնդերի n ը գույգի միջև գործող գրավիտացիոն փոխազդեցության ուժն է ավելի մեծ:

- 1) $ա$ և $գ$
- 2) $բ$ և $գ$
- 3) բոլոր գույգերի համար նույնն է
- 4) $ա$ և $բ$

6

Ֆիզիկական n ը մեծությունն ունի կգմ/վ չափայնությունը:

- 1) ուժ
- 2) իմպուլս
- 3) աշխատանք
- 4) էներգիա

7

Ջսպանախ երկարացումն առաջին դեպքում փոխում են 0 -ից մինչև x , իսկ երկրորդ դեպքում x -ից մինչև $2x$: Ինչպիսի՞ն է առաջին և երկրորդ դեպքերում կատարված աշխատանքների հարաբերակցությունը:

- 1) $A_2 = 2A_1$
- 2) $A_2 = 3A_1$
- 3) $A_2 = A_1/2$
- 4) $A_2 = A_1$

8

Ի՞նչ արագությամբ պետք է գնդակը h բարձրությունից նետել ուղղաձիգ դեպի ներքև, որպեսզի գետնից անդրադառնալուց հետո հասնի $2h$ բարձրության: Բախումը համարել բացարձակ առաձգական: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) \sqrt{gh}
- 2) $2\sqrt{2gh}$
- 3) $2\sqrt{gh}$
- 4) $\sqrt{2gh}$

9

m զանգվածով $2v$ արագությամբ շարժվող գնդին ընդառաջ v արագությամբ շարժվում է $3m$ զանգվածով գունդը: Ինչի՞ն է հավասար գնդերի ընդհանուր իմպուլսի մոդուլը:

- 1) mv
- 2) $2mv$
- 3) 0
- 4) $mv/2$

10

Ո՞ր օրենքի հիման վրա է աշխատում ջրաբաշխական մամլիչը:

- 1) Նյուտոնի I օրենքի
- 2) Արքիմեդի օրենքի
- 3) Հուկի օրենքի
- 4) Պասկալի օրենքի

11

Մաթեմատիկական ճոճանակը փոքր անկյունով շեղում են հավասարակշռության դիրքից և բաց թողնում: Դրանից հետո որքա՞ն ժամանակ անց ճոճանակի կինետիկ էներգիան կընդունի իր նվազագույն արժեքը, եթե ճոճանակի տատանումների պարբերությունը T է:

- 1) $T/8$
- 2) $T/4$
- 3) $T/2$
- 4) $T/16$

12

Ո՞ր մեծությունն է բնութագրում ձայնի տոնի բարձրությունը:

- 1) տարածման արագությունը
- 2) ալիքի երկարությունը
- 3) տատանումների լայնույթը
- 4) տատանումների հաճախությունը

13

Ինչպե՞ս կփոխվի իդեալական գազի ճնշումը, եթե նրա բացարձակ ջերմաստիճանը փոքրացվի 2 անգամ, իսկ մոլեկուլների կոնցենտրացիան մեծացվի 2 անգամ:

- 1) կփոքրանա 4 անգամ
- 2) կմեծանա 2 անգամ
- 3) չի փոխվի
- 4) կմեծանա 4 անգամ

14

Որքա՞ն է բացարձակ զրո ջերմաստիճանը՝ ըստ Ցելսիուսի սանդղակի:

- 1) $0\text{ }^{\circ}\text{C}$
- 2) $-273\text{ }^{\circ}\text{C}$
- 3) $100\text{ }^{\circ}\text{C}$
- 4) $273\text{ }^{\circ}\text{C}$

15

Ո՞րն է Գեյ-Լյուսակի օրենքն արտահայտող հավասարումը:

1) $\frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}$

2) $\frac{p_1}{p_2} = \frac{T_1}{T_2}$

3) $\frac{V_1}{V_2} = \frac{p_2}{p_1}$

4) $\frac{p_1}{p_2} = \frac{V_1}{V_2}$

16

Ո՞ր պրոցեսի արդյունքում է գազի կատարած աշխատանքը զրո:

1) իզոխոր

2) իզոբար

3) ադիաբատ

4) իզոթերմ

17

Կալորաչափում խառնել են նույն հեղուկի հավասար զանգվածով մասնաբաժիններ, որոնց ջերմաստիճաններն են t և $2t$: Որքա՞ն է խառնուրդի վերջնական ջերմաստիճանը:

1) $2t$

2) $\frac{3t}{2}$

3) $\frac{t}{3}$

4) t

18

Ստորև բերված պնդումներից ո՞րն է ճիշտ.

Ա. Ջերմաստիճանն աճելիս դիֆուզիայի արագությունը մեծանում է:

Բ. Դիֆուզիան դիտվում է գազերում, հեղուկներում և պինդ մարմիններում:

1) միայն Բ-ն

2) երկուսն էլ

3) ոչ մեկը

4) միայն Ա-ն

19 Ինչի՞ց է կախված հեղուկի եռման ջերմաստիճանը:

- 1) անոթի ձևից
- 2) հեղուկի զանգվածից
- 3) արտաքին ճնշումից և հեղուկի տեսակից
- 4) տաքացման արագությունից

20 Իրարից որոշ հեռավորության վրա տեղադրված երկու միատեսակ կետային լիցքերի հեռավորությունը մեծացրին 4 անգամ: Ինչպե՞ս պետք է փոխել այդ լիցքերից յուրաքանչյուրը, որպեսզի նրանց էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժը չփոխվի:

- 1) մեծացնել 4 անգամ
- 2) մեծացնել 2 անգամ
- 3) փոքրացնել 2 անգամ
- 4) մեծացնել 16 անգամ

21 Որքա՞ն է \vec{E} լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում էլեկտրոնի արագացման մոդուլը: Էլեկտրոնի լիցքի մոդուլը e է, զանգվածը՝ m : Ծանրության ուժն անտեսել:

- 1) $\frac{eE}{2m}$
- 2) $\frac{E}{em}$
- 3) $\frac{m}{eE}$
- 4) $\frac{eE}{m}$

22 Ինչպե՞ս կփոխվի հարթ կոնդենսատորի էլեկտրատունակությունը, եթե նրա շրջադիրների միջև հեռավորությունը փոքրացնենք 2 անգամ:

- 1) կմեծանա 4 անգամ
- 2) կփոքրանա 2 անգամ
- 3) կփոքրանա 4 անգամ
- 4) կմեծանա 2 անգամ

23

Հաղորդչով հոսանքի անցման ժամանակը 2 անգամ մեծացնելիս նրանով անցած լիցքը նույնպես մեծացավ 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց հոսանքի ուժը հաղորդչում:

- 1) չփոխվեց
- 2) մեծացավ 2 անգամ
- 3) փոքրացավ 4 անգամ
- 4) մեծացավ 4 անգամ

24

Ի՞նչ է իրենից ներկայացնում $\frac{\varepsilon R}{R+r}$ արտահայտությունը:

- 1) շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը
- 2) շղթայի ներքին տեղամասում անջատված հզորությունը
- 3) շղթայի արտաքին տեղամասում լարման անկումը
- 4) հոսանքի ուժը փակ շղթայում

25

Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս կիսահաղորդչի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Մեծանում է ազատ լիցքակիրների ջերմային շարժման միջին արագությունը:
- 2) Մեծանում է ազատ լիցքակիրների կոնցենտրացիան:
- 3) Մեծանում է կիսահաղորդչի դիմադրությունը:
- 4) Մեծանում է ազատ լիցքակիրների ուղղորդված շարժման միջին արագությունը:

26

Ե՞րբ է մասնիկապական դաշտն ազդում լիցքավորված մասնիկի վրա:

- 1) երբ մասնիկը շարժվում է ինդուկցիայի գծերի ուղղությամբ
- 2) երբ մասնիկը շարժվում է ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ
- 3) երբ մասնիկը գտնվում է դադարի վիճակում կամ շարժվում է ինդուկցիայի գծերի ուղղությամբ
- 4) երբ մասնիկը գտնվում է դադարի վիճակում

27

Ինչպե՞ս են փոխազդում երկու զուգահեռ հոսանքակիր հաղորդիչները, երբ նրանց միջով անցնող հոսանքներն ունեն հակադիր ուղղություններ:

- 1) Հաղորդիչներն իրար ձգում են:
- 2) Հաղորդիչներն իրար վանում են:
- 3) Կախված հոսանքի մեծությունից՝ հաղորդիչները կձգեն կամ կվանեն իրար:
- 4) Փոխազդեցության ուժը զրո է:

28

Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Ինչպե՞ս փոխվեց կոճի մագնիսական դաշտի առավելագույն էներգիան:

- 1) մեծացավ 6 անգամ
- 2) մեծացավ 9 անգամ
- 3) չփոխվեց
- 4) մեծացավ 3 անգամ

29

Տրանսֆորմատորի առաջնային փաթույթի գալարների թիվը 2 անգամ մեծ է երկրորդային փաթույթի գալարների թվից: Որքա՞ն է երկրորդային փաթույթի ծայրերին լարման լայնույթը, եթե առաջնային փաթույթի ծայրերին լարման լայնույթը U_0 է: Տրանսֆորմատորն աշխատում է պարապ ընթացքով:

- 1) U_0
- 2) $\sqrt{2}U_0$
- 3) $\frac{U_0}{2}$
- 4) $2U_0$

30

Լույսի ճառագայթն a միջավայրից անցնում է b միջավայր: Անկման անկյունը 30° է, բեկման անկյունը՝ 60° : Որքա՞ն է b ն a միջավայրերի բեկման ցուցիչների հարաբերությունը:

- 1) 2
- 2) $\frac{\sqrt{3}}{3}$
- 3) $\sqrt{3}$
- 4) 0,5

31

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի ճառագայթն օպտիկապես խիտ միջավայրից նոսր միջավայր անցնելիս ...

- 1) անկման անկյունը մեծ է բեկման անկյունից:
- 2) անդրադարձման անկյունը մեծ է բեկման անկյունից:
- 3) անկման անկյունը փոքր է բեկման անկյունից:
- 4) անկման անկյունը հավասար է բեկման անկյանը:

32

Առարկան գտնվում է հավաքող բարակ ոսպնյակից կրկնակի կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ: Ինչպիսի՞ն է նրա պատկերը ոսպնյակում:

- 1) կեղծ, փոքրացված, ուղիղ
- 2) իրական, նույն չափերի, շրջված
- 3) իրական, փոքրացված, շրջված
- 4) իրական, մեծացված, ուղիղ

33

Ինչպիսի՞ն կարող է լինել առարկայի պատկերը ցրող բարակ ոսպնյակում:

- 1) միայն փոքրացված
- 2) մեծացված կամ փոքրացված
- 3) միայն փոքրացված կամ առարկայի չափին հավասար
- 4) միայն մեծացված

34

Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից քիչ շեղվում:

- 1) մանուշակագույն
- 2) կապույտ
- 3) կարմիր
- 4) կանաչ

35

Երկայնակա՞ն, թե՞ լայնական է լուսային ալիքը:

- 1) երկայնական է
- 2) հնարավոր է լինի երկայնական կամ լայնական
- 3) ո՛չ երկայնական է, ո՛չ լայնական
- 4) լայնական է

36

Հաշվարկման համակարգի ընտրությունից կախվա՞ծ է արդյոք
ա. մարմնի արագությունը,
բ. լույսի արագությունը:

- 1) Մարմնի արագությունը կախված է, լույսի արագությունը՝ ոչ:
- 2) Երկուսն էլ կախված են:
- 3) Երկուսն էլ կախված չեն:
- 4) Լույսի արագությունը կախված է, մարմնի արագությունը՝ ոչ:

37

Հանգստի վիճակում գտնվող m զանգվածով աստուր ճառագայթում է ν հաճախության ֆոտոն: Որքա՞ն է այդ դեպքում աստուրի ձեռք բերած իմպուլսը:

- 1) $\frac{h\nu}{c}$
- 2) mc
- 3) $\frac{h\nu}{mc}$
- 4) 0

38

Մետաղը լուսավորում են $\lambda = \lambda_0 / 2$ ալիքի երկարությամբ լույսով, որտեղ λ_0 -ն ֆոտոէֆեկտի կարմիր սահմանն է: Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան:

- 1) $\frac{hc}{\lambda_0}$
- 2) $\frac{hc}{2\lambda_0}$
- 3) $\frac{2hc}{\lambda_0}$
- 4) 0

39

Ի՞նչ են իզոտոպները:

- 1) նույն կարգաթիվն ունեցող, տարբեր թվով նեյտրոններ պարունակող ատոմներ
- 2) նույն թվով էլեկտրոններ պարունակող իոններ
- 3) լիցքավորված ատոմներ
- 4) նույն զանգվածով, տարբեր կարգաթիվ ունեցող ատոմներ

40

Ստորև բերված միջուկներից ո՞րն է պարունակում 6 պրոտոն և 8 նեյտրոն:

- 1) 6_8X
- 2) ${}^{14}_6X$
- 3) ${}^{14}_8X$
- 4) 8_6X

41

Ի՞նչ զանգվածով քարածուխ պետք է այրել, որպեսզի 1,2 տ զանգվածով աղյուսե վառարանը տաքանա 10 °C -ից մինչև 50 °C, եթե տաքացման վրա ծախսվում է անջատված ջերմաքանակի 30 %-ը: Աղյուսի տեսակարար ջերմունակությունը 750 Ջ/(կգԿ) է, քարածուխի այրման տեսակարար ջերմությունը՝ 30 ՄՋ/կգ:

42


0,4 մ երկարությամբ ուղիղ հոսանքակիր հաղորդչի վրա 0,8 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտն ազդում է 1,6 Ն ուժով: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդչում, եթե վերջինս ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի գծերին:

43

Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը, եթե նրա վրա ուղղահայաց ընկնող 600 նմ ալիքի երկարությամբ լույսի 2-րդ կարգի մաքսիմումը դիտվում է 30° անկյան տակ: Պատասխանը բազմապատկեք 10^7 -ով:

44

Մարմինը շարժվում է X առանցքի երկայնքով: Նկարում պատկերված է այդ առանցքի վրա մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ինչի՞ է հավասար մարմնի միջին ճանապարհային արագությունը առաջին 8 վ-ի ընթացքում: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:



(45-46) Բալունում 12 կգ զանգվածով գազի ճնշումը 10^7 Պա է: Բալոնից որոշ քանակությամբ գազ հեռացնելուց հետո գազի ճնշումը դարձավ $2,5 \cdot 10^6$ Պա: Գազի ջերմաստիճանն անփոփոխ է:

45

Քանի՞ անգամ փոքրացավ գազի կոնցենտրացիան բալունում:

46

Ի՞նչ զանգվածով գազ հեռացրին բալոնից:

(47-48) $R_1 = 15$ Օմ և $R_2 = 25$ Օմ դիմադրությունները միացված են հաջորդաբար: R_1 դիմադրության վրա լարման անկումը 60 Վ է:

47

Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

48

Որքա՞ն է լարման անկումն ամբողջ տեղամասում:

(49-50) Լույսի ճառագայթը վակուումից անցնում է թափանցիկ դիելեկտրիկի մեջ: Ճառագայթի անկման անկյունը 45° է: Դիելեկտրիկի բեկման ցուցիչը $\sqrt{2}$ է:

49

Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը:

50

Որքա՞ն է բեկման հետևանքով սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման անկյունը:

(51-52) Առաջին մեկ վայրկյանում հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմինն անցնում է 1 մ ճանապարհ, իսկ երկրորդ վայրկյանում՝ 2 մ ճանապարհ:

51

Որքա՞ն է մարմնի արագացումը:

52

Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

(53-54) Սառցի վրա կանգնած 50 կգ զանգվածով տղան 2 կգ զանգվածով գունդը 10 մ/վ արագությամբ նետում է հորիզոնի նկատմամբ 60° անկյան տակ: Օդի դիմադրությունն ու շփումը անտեսել:

53

Ի՞նչ արագություն է ձեռք բերում տղան գունդը նետելուց անմիջապես հետո: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

54

Ի՞նչ աշխատանք է կատարում տղան քարը նետելու համար:


(55-57) Երբ առարկայի հեռավորությունը բարակ հավաքող ոսպնյակից 0,36 մ է, ոսպնյակում նրա իրական պատկերի բարձրությունը 0,1 մ է, իսկ երբ հեռավորությունն այդ նույն ոսպնյակից 0,24 մ է, իրական պատկերի բարձրությունը 0,2 մ է:

55 Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

56 Որքա՞ն է առարկայի բարձրությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

57 Որքա՞ն է առաջին դեպքում պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

(58-60) 1 մոլ միատոմ իդեալական գազը նկարում պատկերված իզոխոր (1 → 2) և իզոբար (2 → 3) պրոցեսների արդյունքում 1 վիճակից անցնում է 3 վիճակին: 1 վիճակում գազի բացարձակ ջերմաստիճանը 180 Կ է: Գազային ունիվերսալ հաստատունը $8,3 \text{ Ջ}/(\text{մոլ}\cdot\text{Կ})$ է:



58 Որքա՞ն է գազի բացարձակ ջերմաստիճանը 3 վիճակում:

59 Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը $1 \rightarrow 2 \rightarrow 3$ պրոցեսի ընթացքում:

60 Որքա՞ն է գազին հաղորդված ջերմաքանակը $1 \rightarrow 2 \rightarrow 3$ պրոցեսի ընթացքում:

(61-64) $R = 15$ Օմ դիմադրությամբ մետաղե շրջանակը գտնվում է $B = 0,04$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում, որի ինդուկցիայի վեկտորը շրջանակի հարթության հետ կազմում է $\alpha = 30^\circ$ անկյուն: Երբ մագնիսական դաշտի ինդուկցիան $\Delta t = 0,03$ վ ժամանակամիջոցում հավասարաչափ նվազում է մինչև զրո արժեքը, շրջանակում անջատվում է $Q = 0,5$ մՋ ջերմաքանակ:

61

Որքա՞ն է շրջանակում մակաձված ԷլՇՈւ-ն: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

62

Որքա՞ն լիցք է անցնում շրջանակի լայնական հատույթով այդ ընթացքում: Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով:

63

Որքա՞ն է շրջանակում մագնիսական հոսքի փոփոխության մոդուլն այդ ընթացքում: Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով:

64 Որքա՞ն է շրջանակի մակերեսը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

(65-68) Գնդիկը նետել են թեք հարթության երկայնքով դեպի վեր: Նետման կետից 30 սմ հեռավորության վրա գնդիկը եղել է երկու անգամ՝ նետման պահից 1 վ և 3 վ անց: Շփումը բացակայում է:

65 Որքա՞ն է գնդիկի սկզբնական արագությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

66

Որքա՞ն է գնդիկի արագացման մոդուլը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

67

Նետումից որքա՞ն ժամանակ անց գնդիկը կվերադառնա իր սկզբնական դիրքին:

68

Որքա՞ն է նետման կետից գնդիկի առավելագույն հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

69

Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Ֆոտոնի էներգիան և իմպուլսը կախված են լույսի հաճախությունից:
- 2) Լույսի ազդեցությամբ մետաղը կարող է ձեռք բերել դրական լիցք:
- 3) Ֆոտոէֆեկտի արդյունքում մետաղից պոկված Էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան կախված է ընկնող լույսի ուժգնությունից:
- 4) Ֆոտոէֆեկտ կդիտվի, եթե ընկնող լույսի քվանտի *hν* էներգիան մեծ լինի *A* ելքի աշխատանքից:
- 5) Ֆոտոէֆեկտի արդյունքում մետաղից պոկված Էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան կախված է լույսի հաճախությունից:
- 6) Ֆոտոէֆեկտի ժամանակ ընկնող լույսի հաճախությունը մեծացնելիս մետաղի ելքի աշխատանքը մեծանում է:

70

Հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը մեծանում է, իսկ ջերմաստիճանը՝ նվազում: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Գազի ճնշումը նվազում է:
- 2) Գազի խտությունը մեծանում է:
- 3) Գազի մոլեկուլների կոնցենտրացիան փոքրանում է:
- 4) Գազի մոլեկուլների միջին կինետիկ էներգիան աճում է:
- 5) Գազի ներքին էներգիան աճում է:
- 6) Գազն արտաքին ուժերի դեմ կատարում է դրական աշխատանք: